

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ի. ՌԻԺԿՈՎԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի դեկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետին այցելեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ և՝ Հայաստանի երկրաշարժի առիթով ստեղծված ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովի նախագահ Ն. Ի. Ռիժկովը:

Մեծահարգ հյուրին ուղեկցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Վարդանյանը:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ հանդիպման ընթացքում տեղի ունեցավ արդյունավոր և գործնական խոսակցություն երկրաշարժի տարողության և նրա սարսափելի հետևանքների վերացման, այնտեղ ենթարկված քաղաքների և գյուղերի վերականգնման մասին:

Վեհափառ Հայրապետը համոզում հայտնեց, որ Հայ Եկեղեցին իր բոլոր հնարավորություններով կլինի իր ժողովրդի կողքին և կօժանդակի երկրաշարժի պատճառած վերքերի արագ ապաքինմանը:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց Խորհրդային Միության կենտրոնական կառավարության և խորհրդային ժողովուրդներին՝ եղբայրական օգնության համար: